ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 30.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-87/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2016թ. թիվ 03/73-3/25045-16 գրությամբ ներկայացված «Ֆոտոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 90036001) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-87/16 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2016թ. թիվ 1/73-1/15964-16 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 03.06.2016թ. թիվ ԴՎԱ/1489 գրությունը, ինչպես նաև ուսումնասիրելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) կողմից 27.03.2017թ. ներկայացված եզրակացությունը պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումներն և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև Պատվիրատու) 03.06.2016թ. թիվ ԴՎԱ/1489 գրության հիման վրա, 08.06.2016թ. թիվ 1/73-1/15964-16 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ խնդրելով ուսումնասիրել «Ֆոտոն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Վերոնշյալ գրությանը կից ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին տրամադրել է ՀՀ պաշտպանության նախարարության 03.06.2016թ. թիվ ԴՎԱ/1489

գրության պատճենը և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև Ընթացակարգ) վերաբերող այլ փաստաթղթերի պատճեններ:

Կենտրոնն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2016թ. թիվ 1/73-1/15964-16 և ՀՀ պաշտպանության նախարարության 03.06.2016թ. թիվ ԴՎԱ/1489 գրությունները, 31.10.2016թ. թիվ 01/04.1/3958-16 գրությամբ արձանագրել է Ընկերության կողմից Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակներում ներկայացրել է կեղծ տվյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 20.02.2016թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2016թ. թիվ 1/73-1/15964-16 գրությամբ ներկայացված Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Միաժամանակ, Կենտրոնը հայտնել է, որ խախտումը թույլ տալու պահից (20.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Ընկերությունը կարող է ներառվել Ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.11.2016թ. թիվ 03/73-3/25045-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 03.11.2016թ. թիվ ՎՀ/6016-16 գրության համաձայն՝ վերջինիս կողմից կազմակերպված ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԱՊՁԲ-16/13/1 գնման ընթացակարգին «Ֆոտոն» ՍՊԸ-ն 24.11.2016թ.-ին մասնակցության հայտ է ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի

2-րդ ենթակետը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել Ընկերությանը Ցուցակում ներառելու պաշտոնական գործընթաց:

Ֆինանսների նախարարությունը 11.11.2016թ. թիվ 03/73-3/25383-16, 17.11.2016թ. թիվ 03/73-1/25699-16, 25.11.2016թ. թիվ 03/73-3/26308-16, 06.12.2016թ. թիվ 03/73-3/27041-16, 16.12.2016թ. թիվ 03/73-1/28025-16, 28.12.2016թ. թիվ 03/73-3/28853-16, 26.01.2017թ. թիվ 03/73-3/1084-17, 02.02.2017թ. թիվ 03/73-3/1432-17, 03.02.2017թ. թիվ 03/73-3/1521-17, 21.02.2017թ. թիվ 04/73-3/2709-17, 30.03.2017թ. թիվ 04/73-3/5611-17 գրություններով Կենտրոնին հայտնել է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտեր է ներկայացրել մի շարք գնման ընթացակարգերին մասնակցելու նպատակով:

2. «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկներն և դիրքորոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ՍՑ-ԳԲԽ-87/16 ծածկագրով բողոքի քննության շրջանակներում 27.01.2017թ. ժամը 17:30-ին տեղի ունեցած բողոքը քննող հանձնաժողովի նիստին «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց, որ Ընկերության կողմից կեղծ տվյալ չի ներկայացվել և ներկայացված տեխնիկական բնութագիրը ամբողջովին համապատասխանում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, հետևաբար, Ընկերության կողմից թույլ չի տրվել խախտում:

Ընկերությունը հայտնել է, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի չափանիշների և Ընկերության կողմից ներկայացված չափանիշների վերլուծությունը փաստում է այն մասին, որ դրանք իրարամերժ չեն, քանի որ Պատվիրատուի կողմից սահմանվել է նվազագույնի և առավելագույնի շեմեր, իսկ Ընկերության կողմից ներկայացվել է այդ շեմերին համապատասխանող չափանիշներով տեխնիկական բնութագիր:

Ընկերությունը Կենտրոնին է տրամադրել նաև իր դիրքորոշումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումներն և դիրքորոշումը.

Պատվիրատուն իր դիրքորոշումը հայտնել է 03.06.2016թ. թիվ ԴՎԱ/1489 գրությամբ և կից ներկայացրել Ընթացակարգին վերաբերող բոլոր փաստաթղթերի պատճենները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ՍՑ-ԳԲԽ-87/16 ծածկագրով բողոքի քննության շրջանակներում 27.01.2017թ. ժամը 17:30-ին տեղի ունեցած բողոքը քննող հանձնաժողովի նիստին ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը չի ապահովել իր մասնակցությունը, սակայն պատշաճ ծանուցված է եղել նիստի անցկացման օրվա և ժամի վերաբերյալ:

4. ՍՑ-ԳԲԽ-87/16 ծածկագրով բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

Կենտրոնը Խորհրդին է ներկայացրել իր 27.03.2017թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2016թ. թիվ 03/73-3/25045-16 գրությամբ ներկայացված «Ֆոտոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 90036001) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

5. ՍՑ-ԳԲԽ-87/16 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2016թ. թիվ 1/73-1/15964-16 գրությամբ ներկայացված Ընկերությանը Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված ՍՑ-ԳԲԽ-87/16 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 20.02.2016թ.-ին հայտ է ներկայացրել և գնահատող հանձնաժողովի որոշմամբ մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

2. Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով 20.02.2016թ. ներկայացված հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին

հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 1-12, 14-33, 37-66, 68-73, 75, 77, 78, 80, 84-93 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2016թ. նիստի N 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը՝ մասնակցին առաջարկելով շտկել գնման առարկա հանդիսացող ապրանքի տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունը՝ 78-րդ չափաբաժնի մասով, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է տեխնիկական բնութագիր, որը կրկին չի համապատասխանել հրավերի պահանջներին, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով մասնագիտական եզրակացությունը, որոշել է մերժել մասնակցի հայտը տվյալ չափաբաժնի մասով՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

4. Ընթացակարգի հրավերով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ օդորակիչ՝ 24000 BTU հզորությամբ, որը նախատեսված է մինչև 80 մ^2 տարածքում ջերմաստիճանի ավտոմատ կարգավորման համար, ***<u>առավելագույն</u> սպառվող հզորությունը՝ 2,6 կՎտ, հզորությունը սառեցման ռեժիմում՝ <u>նվազագույնը</u>՝ 8 կՎտ, հզորությունը տաքացման ռեժիմում՝ <u>նվազագույնը</u>՝ 8,4 կՎտ***:

5. Ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ օդորակիչ 24000 BTU հզորությամբ, որը նախատեսված է մինչև 80 մ^2 տարածքում ջերմաստիճանի ավտոմատ կարգավորման համար, HISENSE AS24HR4SFB (TD), ***սպառվող հզորությունը՝ <u>2,5 կՎտ</u>, հզորությունը սառեցման ռեժիմում՝ <u>նվազագույնը՝ 6,8 կՎտ</u>, հզորությունը տաքացման ռեժիմում՝ <u>նվազագույնը՝ 7,1 կՎտ</u>***:

<u>6. Խորհրդի հիմնավորումներն և եզրահանգումը.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2016թ. թիվ 1/73-1/15964-16, 07.11.2016թ. թիվ 03/73-3/25045-16 և ՀՀ պաշտպանության նախարարության 03.06.2016թ. թիվ ԴՎԱ/1489 գրությունների պատճենները և կից փաստաթղթերը, հաշվի առնելով Ընկերության հիմնավորումներն և ՍՑ-ԳԲԽ-87/16 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի նիստի արդյունքները, գտնում է, որ ՀՀ

ֆինանսների նախարարության 07.11.2016թ. թիվ 03/73-3/25045-16 գրությամբ ներկայացված «Ֆոտոն» ՍՊԸ-ին Ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպմն սկզբունքի վրա:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 95-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 96-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: *Սույն կետում նշված անձը տալիս է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին:* Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է

պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2016թ. նիստի N 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը՝ մասնակցին առաջարկելով շտկել գնման առարկա հանդիսացող ապրանքի տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունը՝ 78-րդ չափաբաժնի մասով, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է տեխնիկական բնութագիր, որը կրկին չէր համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով մասնագիտական եզրակացությունը, որոշել է մերժել մասնակցի հայտը տվյալ չափաբաժնի մասով՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ օդորակիչ՝ 24000 BTU հզորությամբ, որը նախատեսված է մինչև 80 մ^2 տարածքում ջերմաստիճանի ավտոմատ կարգավորման համար, առավելագույն սպառվող հզորությունը՝ 2,6 կՎտ, հզորությունը սառեցման ռեժիմում՝ նվազագույնը՝ 8 կՎտ, հզորությունը տաքացման ռեժիմում՝ նվազագույնը՝ 8,4 կՎտ:

Ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ օդորակիչ 24000 BTU հզորությամբ, որը նախատեսված է մինչև 80 մ^2 տարածքում ջերմաստիճանի ավտոմատ կարգավորման համար, HISENSE AS24HR4SFB (TD), սպառվող հզորությունը՝ 2,5 կՎտ, հզորությունը սառեցման ռեժիմում՝ նվազագույնը՝ 6,8 կՎտ, հզորությունը տաքացման ռեժիմում՝ նվազագույնը՝ 7,1 կՎտ:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի թվով երեք չափանիշները չեն հակասում հրավերով սահմանված չափանիշներին, մասնավորապես՝ հրավերով սահմանվել է **առավելագույն** սպառվող հզորությունը՝ **2,6 կՎտ**, իսկ Ընկերության կողմից տրամադրված տեխնիկական բնութագրում նշված է՝ **2,5 կՎտ**, հետևաբար, Ընկերությունը չի խախտել առավելագույնի պահանջը և ներկայացրել է 2,6 կՎտ-ից ցածր հզորություն, այն է՝ 2,5 կՎտ:

Հրավերով սահմանվել է հզորությունը սառեցման ռեժիմում՝ **նվազագույնը՝ 8 կՎտ,** իսկ Ընկերության կողմից տրամադրված տեխնիկական բնութագրում նշված է հզորությունը սառեցման ռեժիմում՝ **նվազագույնը՝ 6,8 կՎտ:** Այս երկու չափանիշները չեն գտնվում հակասության մեջ, քանի որ երկու չափանիշներն էլ սահմանում են նվազագույն շեմ: Ապրանքը մատակարարելիս, Ընկերությունը կարող էր, ղեկավարվելով իր կողմից նշված ապրանքի տեխնիկական բնութագրով (նվազագույնը՝ 6,8 կՎտ) և հրավերով սահմանված նվազագույնը՝ 8 կՎտ չափանիշով, Պատվիրատուին տրամադրել սառեցման ռեժիմում կոնկրետ 8 կՎտ հզորությամբ օդորակիչ (կամ 9 կՎտ, կամ 12 կՎտ հզորությամբ և այլն) և դա համապատասխան կլիներ և հրավերով սահմանված պահանջին, և Ընկերության կողմից տրամադրված տեխնիկական բնութագրի չափանիշին, հետևաբար, այս չափորոշիչները ևս իրարամերժ չեն և չեն հակասում միմյանց:

Հրավերով սահմանվել է հզորությունը տաքացման ռեժիմում՝ **նվազագույնը՝ 8,4 կՎտ**, իսկ Ընկերությունը տեխնիկական բնութագրում նշել է հզորությունը տաքացման ռեժիմում՝ **նվազագույնը՝ 7,1 կՎտ**, այս չափանիշները ևս իրարամերժ չեն, քանի որ չի բացառվում, որ Ընկերության կողմից մատակարարվելու էր ապրանք՝ վերոնշյալ երկու չափորոշիչների միաժամանակյա բավարարման պայմաններում, այն է՝ 8,4 կՎտ հզորությամբ կամ 9 կՎտ, կամ 12 կՎտ և այլն:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ, նման պայմաններում, գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման փուլում հայտը ենթակա չէր մերժման, քանի որ Ընկերության կողմից առաջարկված տեխնիկական բնութագրի չափանիշները չեն հակասում հրավերով սահմանված չափանիշներին, իսկ անհամապատասխանության առկայության վերաբերյալ հետևություն հնարավոր էր կատարել բացառապես ապրանքի մատակարարման փուլում՝ ելնելով ապրանքի հստակ չափանիշներից և համեմատելով դրանք պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի հետ: Միայն մատակարարման նպատակով ներկայացված ապրանքի հստակ տվյալների ուսումնասիրման արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների հիման վրա Պատվիրատուն իրավասու կլիներ ընդունել կամ չնդունել ապրանքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2016թ. թիվ 03/73-3/25045-16 գրությամբ ներկայացված «Ֆոտոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 90036001) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՍՑ-ԳԲԽ-87/16 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի՝

նախագահ **Գ. Հայրապետյան**

անդամ **Ա. Ավետիսյան**